ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՆՈՐԱՅՐ (ՊՈՊ) ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՅ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԻՄԱՐ ՆՈՐԱՅՐ (ՊՈՊ) ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆԻՆ
ՈՐ Ի ՊԱՆՔՈՔ, ԹԱՅԼԱՆՏ

Անցնող տարիներին Ձեզ անձամբ ճանչնալու ուրախութիւնը ունեցանք Ծայրագոյն Արեւելքի Պանքոք քաղաքի. ի Մայր Հայաստան եւ ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Ձեր մէջ տեսանք մարդկային ազնուագոյն զգացումներուն հետ միասին հայկական հարազատ ապրումների եւ նուիրաբերումի օրինակելի ոգի:

Դուք ցուցաբերեցիք բացառիկ սէր եւ զոհողութիւն հանդէպ Ձեր Առաքելական Մայր Եկեղեցիին, Հայաստանին եւ հայ ժողովուրդին:

Բազմաթիւ բարերարութիւններով Դուք Ձեր լայն բաժինը բերիք մեր ազգի զարգացման եւ հայրենիքի շինութեան: Ամենէն գեղեցիկ եւ տպաւորիչ արարքը եղաւ Ձեր իշխանական նուիրատուութիւնը մեր Եկեղեցւոյ հիմնադրութեան 1700-ամեակին առիթով. Դուք լայն բաժին բերիք Երեւան մայրաքաղաքի մէջ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ անունով կառուցուելիք եկեղեցու մուտքին շինուող Ս. ԱՇԽԷՆ մատուռին:

Ի գնահատութիւն Ձեր այս գովելի եւ աստուածահաճոյ արարքին եւ այլ ազգանուէր եւ եկեղեցասէր նուիրատուութեանց՝ Ձեզի կը շնորհենք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագոյն կարգի շքանշանը՝

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ:

Կ՚աղօթենք առ Աստուած, որ զօրացնէ Ձեզ եւ Ձեր թանկագին տիկինը՝ Լինտան, եւ Ձեր զաւակները, որոնք միշտ զօրավիգ կանգնեցան Ձեզի Ձեր ամբողջ կեանքի ընթացքին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մենջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 22 Մայիսի
Յամի Տեառն 1999 եւ ի թուին Հայոց ՌՆԽԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 235